տակում, մանաւանդ, որ առաջինը կապ էլ չունի մեր Սրբութեան հետ։ Դոցանից հընագոյնը Սաբինայի դրան խաչելութիւնն է, երկրորդը Պերմի սկուտղի և ապա Բաբուլայի 586 թուի աւետարանի խաչելութեան պատկերը և ուրիշ մի քանի մանր իրեր։ Բիւզանդական թանգարանի յայտնի խաչելութիւնը փղոսկրի տախտակի վերայ Ե. դարից, հաշուի չենք առնում՝ զուտ արեւմտեան ծագում ունենալու պատճառով։

Ա՛րդ, Սաբինայի դրան պատկերաքանդակի մէջ տեսնում ենք Յիսուս խաչուած է գերանների վերայ, ուղիղ կանգնած, գլուխն առանց թեքելու, մազերն երկար և թափուած ուսերի վերայ, կարճ մորուքով և բաց աչքերով, թեւերը քիչ ճկուած արմունկներից, մարմինը մերկ, ամօթանքը միայն ծածկուած նեղ ծածկոյթով, ոտքերն իրար մօտ և դէպի առաջ ուղղուած(1)։ Պերմի սկուտղը ասորական արձանագրութեան հնագրական նշաններով համարուած է Ը–Զ. դարի գործ. սկուտղի մետալիոններից մէկը խաչելութիւնն է. այստեղ Յիսուս հագել է մինչև ոտները ծածկող, թեւերով չապկաձեւ հագուստ (κολόβιον, colobium), գլխի շուրջը հասարակ նիմբուսով, երեսն ու բաց աչքերը ուղիղ դէպի առաջ։ Գլխի մազերը երկար և ուսերի վերայ իջած, այտերն ու ծնոտը միրուքով ծածկուած, թեւերը հորիզոնական տարածուած, ոտքերի տակ պատուանդան, առանց ցաւի արտայայտութեան և հոգեկան աղերսի դէպի չրջապատը(2)։ Բաբուլայի մանրանկարի մէջ Յիսուս հագել է մինչև ոտները հասնող, անթեւ կոլոբիոն (κολόβιον), հասարակ նիմբուսով, գլուխը քիչ դէպի աջ աւազակը թեքած, աչքերը բաց. ձեռքերը տարածել է խաչափայտի հորիզոնական թեւերի վերայ, որ բևեռուած են ափերի միջից. ոտքերը նոյնպէս բևեռուած թաթերից վեր, բայց առանց պատուանդանի. ամբողջ մարմնով, կարծես, կանգնած, առանց ցաւի արտայայտութեան, թէև խոցուած կողից արիւն է թափուած, մի հանգամանք, որ տեսարանի բարդութեան հետ, տեղիք է տուել կասկածելու պատկերի անաղարտ մնալու մասին(1)։

Եօթերորդ դարուց առաջ պէտք է դնել Ախմիմի ոսկեթերթի խաչելութիւնը, նիմբուսը խաչաձև, բաց աչքերով, կարճ մորուքով, դէմքը դէպի առաջ ուղղուած, ձեռքերը խաչի հորիզոնական թեւերին տարածուած, վերից վար մինչև ոտները հասնող թեւաւոր չապկով, վերան ժապաւէնաձև երկու շերտով, ոտքերը պատուանդանի վերայ ուղիղ կանգնած, ինչպէս և եգիպտական մի ասեղնեգործ, հասարակ նիմբուսով, դէպի առաջ ուղղուած դէմքով, որ ծածկուած է կարճ մորուքով, հորիզոնական ձգուած թեւերով։ Հագել է մինչև ոտները հասնող տունիկայ, վերայից կարճ պալիում, կանգնած ուղիղ՝ կենդանի մարդու նման, լայն պատուանդանի վերայ. միայն պարզ չէ, աչքերը բա՞ց են թէ ոչ(2)։

Եօթից ութերորդ դարի գործեր են իրենց ծագումով նաև մի քանի բրոնզէ բուրվառներ կամ ղամբարներ, որոնց օրինակները ցրուած են այլ և այլ թանգարաններում(3)։ Կոնդակովը համարում է դրանց Թ–Ժ. դարի բիւզանդական արուեստի արտադրութիւններ. բայց անուրանալի է, որ նրանց ծագումը Պաղեստինից է և կամ Ասորիքից, որ հաստատել կարելի է պատկերների առանձնայատկութիւններով և մա-

(1) Սաբինայի դրան պատկերը տե՛ս Krause. I. 174։

(2) Reil. Taf. II Smirnow. Bost. Serebro. Tabl. XV. 38։

(1) Պատկերը տե՛ս Krans. I. 175։ Beissel Gesch. der Evangelienbücher. 1906. Freiburg 1|B 64։ Kraunsն ԺԱ. դարն է համարում պատկերի փոփոխութեան ժամանակը. Անաստաս Սինէացուն վերագրուած խաչելութիւնը նոյնպէս կասկածելի է համարում, թէ է. դարի գործ լինի (II 313. պատկ. 225)։

(2) Kraus. I. 170։ Kaufman. Die Christliche Archäologie. 1905. 396–397։

(3) Դոցանից երկուսը (**պատկ. 19** եւ **20**) որ գտնուել են Ջրաբերդի եղիշէ առաքեալ կամ Ջրվշտիկ վանքում եւ Վարանդայի Սիսորաշէն գիւղի մօտ, հրատարակել ենք «Տարազ»ում 1909 N 1, «Հնութեան նշխարներ» վերնագրով եւ ապա նուիրել էջմիածնի թանգարանին. մի երրորդ օրինակ ձեռք է բերել հանգուցեալ Խայիկ վարդապետը որ դարձեալ նոյն թանգարանումն է այժմ։ Կոնդակովի եւ Ուվարովայի օրինակների մասին Russkia drewnocmu we pamiatnikach Iskysstwa. S[t]. wipusk. IV. 1891. Otto Pelkaն եւս հրատարակելով Նիւրնբերգի թանգարանի օրինակը տալիս է եւրոպական թանգարաններում գտնուածների ցանկը. երկու օրինակ էլ տեսել ենք Կայիրէի թանգարանում եւ երկու օրինակ Լենինգրադի Էրմիտաժում, ակադեմիկ Մառի կողմից յանձնուած։